ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**
   Հրանուշ Հակոբյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Արգենտինայի Հանրապետություն ս. թ. մայիսի 29 հունիսի 2-ը, Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն ս. թ. հունիսի 2-4-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   - ՖԱՅԴԵՔ հիմնադրամի հիմնադիր և նախագահ Դանիել Ստամբուլյան, Բրազիլիայի հայ համայնք

5. **Գործուղման նպատակը՝**
   - Մասնակցություն Հայ բժիշկների 12-րդ միջազգային համագումարին,
   - Հանդիպումներ հայկական համայնքի ներկայացուցիչների հետ՝ սերտացնելու համայնքային կառույցների հետ կապերը, տեղայնացնելու Սփյուռքի նախարարության ծրագրերը,
   - Հանդիպումներ պետական պաշտոնյաների հետ,
   - Այցելություններ դպրոցներ, մշակութային կենտրոններ, եկեղեցիներ:

6. **Քննարկման թեմաները՝**
   - Հայաստանի Հանրապետության հզորացում և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հայության ջանքերի մեկտեղում,
   - ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ սկսված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ընդլայնում,
   - Սիրիական ճգնաժամի արդյունքում առաջացած փախստականների ներկա իրավիճակին բոլոր ուղղություններով օգնության կազմակերպում,
   - Բրազիլիայում համակարգող մարմնի ստեղծման քննարկում,
   - Տուրիզմի զարգացմանը նպաստող քայլերի և բիզնեսմենների խմբերի Հայսատան այցելությունների կազմակերման մասին:

7. **Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումներ՝

- Արգենտինայի Հանրապետության Պատգամավորների պալատի Արգենտինա-Հայաստնա բարեկամության խմբի հետ,
- Արգենտինայի Հանրապետության մարդու իրավունքների և մշակութային բազմազանության պետական քարտուղար Կլաուդիո Ավրուխի հետ,
- Կորդոբա նահանգի վարչապետ Խուան Կառլոս Մասսեիի հետ,
- Կորդոբայի քաղաքապետ Ռամոն Խավիեր Մեստրեի հետ,
- Բրազիլացի քաղաքական գործիչ Ալմինու Մոնտեյրու Ալվարես Ալֆոնսոյի հետ,
- Բուենոս Այրեսի բոլոր հայկական կառույցների ղեկավարների հետ,
- Օտարերկրյա համայնքների Արգենտինայի Ֆեդերացիայի նախագահ Խուան Սարաֆյանի հետ,
- Հայ Առաքելական եկեղեցու Արգենտինայի և Չիլիի թեմի առաջնորդ Տեր Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանի և Բուենոս Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մաղաքիա վարդապետ Ամիրյանի հետ,
- Բրազիլիայում ՀՀ պատվավոր հյուպատոս Հիլդա-Տիրուհի Բուրմայանի
- Սան Պաուլոյի հայկական բոլոր կառույցների ղեկավարների հետ,

Ելույթներ՝

- Հայ բժիշկների միջազգային 12-րդ համագումարի (AMWC) բացման հանդիսավոր արարողության ժամանակ,
- ՀԲԸՄ Բուենոս Այրեսի մասնաճյուղի «Մարի Մանուկյան» վարժարանում՝ ՀԲԸՄ վարչակազմի անդամների և ուսուցիչների հետ հանդիպման ժամանակ:
- «Սարդարապատ» կենտրոնում և «Թեքեյան» մշակութային միությունում,
- Արգենտինահայ մշակութային միությունում՝ միության անդամների հետ հանդիպման ժամանակ,
- Հայաստան-Արգենտինա դպրոցում՝ մանկավարժների և աշակերտների առջև,

- «Գրիգոր Լուսավորիչ» դպրոցի աշակերտական և մանկավարժական կոլեկտիվի առջև,
- Կորդոբայի «Սահակ-Մեսրոպ» հայկական վարժարանում՝ ուսուցիչների և աշակերտների հետ հանդիպման ժամանակ,
- Կորդոբայի ՀՅԴ «Անդրանիկ» ակումբում՝ ակումբի անդամների հետ հանդիպման ժամանակ,
- ՀՅԴ «Արմենիա» ակումբում՝ ակումբի անդամների հետ հանդիպման ժամանակ,
- Սան Պաուլոյի ՀՀ պատվավոր հյուպատոսությունում՝ հայկական եկեղեցիների հոգևոր այրերի, համայնքային կազմակերպությունների ղեկավարների, համայնքային գործիչների և գործարարների հետ հանդիպման ժամանակ,
- Օտարերկրյա համայնքների Արգենտինայի Ֆեդերացիայի անդամների հետ հանդիպման ժամանակ,
- Օզասկոյ հայ համայնքի առջև,
- Սան Պաուլոյում բրազիլացիների և հայ համայնքի ներկայացուցիչների առջև:

Բարձրացված հարցեր՝

- Յուրաքանչյուր կառույցի առջև խնդիր է դրվել, որ գոնե մեկ ներդրում բերելի Հայաստանի Հանրապետություն,
- ԼՂ-ի խնդիրներով ավելի ակտիվ զբաղվել,
- Շարունակել և ընդլայնել մասնագիտական ընկերակցությունների գործունությունը,
- Շարունակել պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման առումով,
- Աշխատանքներ տանել արգենտինացի, բրազիլացի և հայ գործարարների կողմից ներդրումների իրականացում Հայաստանի Հանրապետությունում,
- Նպաստել տուրիզմի զարգացմանը, թափ հաղորդել «3 տարին մեկ անգամ հանգստանալ Հայաստանի Հանրապետությունում» շարժմանը,
- Մասնակցել ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին,
- Լուրջ ուշադրություն դարձնել հայոց լեզվի ուսուցման հարցերին, «Տանը խոսենք հայերեն» շարժումը դարձնել յուրաքանչյուր կառույցի խնդիրը,
- Զբաղվել համայնքից հեռացած հայերին համայնքային կառույցների աշխատանքներում ներգրավելու հարցով:

Մայիսի 29, 2017թ.

Ուշ երեկոյան նախարարը ժամանեց Բուենոս Այրես:

Մայիսի 30, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն Արգենտինայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էսթեր Մկրտումյանի ուղեկցությամբ այցելել է Հայկական բարեգործական ընդհանուր միության Բուենոս Այրեսի մասնաճյուղի «Մարի Մանուկյան» վարժարան, որտեղ մասնակցել է հատուկ կազմակերպված միջոցառմանը: Ի պատիվ նախարարի այցելության՝ մանկապարտեզի և նախակրթարանի աշակերտները կատարել են հայրենասիրական երգեր, որոնց միացել է վարժարանի երգչախումբը:
- Այնուհետև նախարարը մասնավոր հանդիպում է ունեցել ՀԲԸՄ վարչակազմի անդամների և ուսուցիչների հետ, որին ներկա են եղել միության ատենապետ Ռուբեն Քետիքյանը, փոխատենապետ Անտոնիո Սարաֆյանը, պատվո ատենապետ Ռուբեն Քեշիշյանը, պատվո անդամ Հարություն Սարաֆյանը, տիկնանց հանձնախմբի ատենապետուհի Մարթա Էմիրյանը, տիկնանց հանձնախմբի անդամ Ռազմուհի Խռլոփյանը, վարչակազմի անդամներ Մադլեն Չրեյանը, Ադոլֆո Սմիրլյանը, Միրթա Սարաֆյանը, Խուան Պալյանը և Բուենոս Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մաղաքիա վարդապետ Ամիրյանը և համայնքային այլ ներկայացուցիչներ: Նախարար Հ. Հակոբյանը ներկայացրել է նախարարության գործունեությունն ու իրականացվող ծրագրերը՝ հորդորելով առավել ակտիվացնել հատկապես երիտասարդների մասնակցությունը հայապահպան ծրագրերին: Հրանուշ Հակոբյանն անդրադարձել է նաև ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնած «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը, որին միացել և գործուն մասնակցություն է ունենում նաև միությունը: Սփյուռքի նախարարն իր գոհունակությունն է հայտնել միության վարչակազմին՝ ամեն տարի ամռանը հատուկ ծրագրով «Մարի Մանուկյան» վարժարանի շրջանավարտներին Մայր Հայրենիք այցելելու հնարավորություն ընձեռելու համար:
- Նախարարը այցելել է «Սարդարապատ» կենտրոն, հանդիպել է ՌԱԿ, «Թեքեյան» մշակութային միության անդամներին, ելույթ է ունեցել, պատասխանել է նրանց հարցերին: Նախարարն ափոսանք է հայտնել, որ ռամկավարները չեն կարողացել միավորվել:

- Այնուհետև նախարարը այցելել է դաշնակցական կենտրոններ, հանդիպել է ղեկավար մարմնի անդամների հետ և հաստատել իր մասնակցությունը երեկոյան կայանալիք ՀՅԴ ձեռնարկին:
- Ապա նախարարը եղել է ՀՕՄ-ի խնամակալության տակ գտնվող ծերանոցում, որտեղ ապրում են 60-ից ավել մեծահասակներ:
- Այնուհետև նախարարը հանդիպել է նաև Կոմունիստական կուսակցության ներկայացուցիչներ հետ, նրանց «Գայանե» պարախմբին հրավիրել է մասնակցելու «Իմ Հայաստան» համահայկական փառատոնին՝ 2018 թվականին:
- Նախարար Հ. Հակոբյանը Արգենտինայում ՀՀ դեսպանատանը հանդիպել է աշխատակիցներին և հորդորել, որ առավել ակտիվ տարածել ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերը և նոր կապեր հաստատել Հայաստանի Հանրապետության և համայնքի տարբեր կառույցների միջև:
- Ապա նախարարը մեկնել է Բուենոս Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճար և հանդիպել թեմի ղեկավար կառույցների ներկայացուցիչներին և Հայ Առաքելական եկեղեցու Արգենտինայի և Չիլիի թեմի առաջնորդ Տեր Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանին: Նա ծաղիկներ է խոնարհել Հայոց ցեղասպանության և Արցախի հերոսամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններին:
- Բուենոս Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարում նախարարը հանդիպել է մի խումբ գործարար, բարերար հայերի հետ: Երկուստեք կարծիք են հայտնել, որ արգենտինահայերի կարողություններն ու հնարավորությունները լավագույնս չեն օգտագործվում Հայրենիքի զարգացման համար: Նախարարը կոչ է արել հետևել Էդուարդո Էռնեկյանի օրինակին և ավելի ակտիվացնել ներդրումները Հայաստանում և Արցախում:
- Նախարարը հանդիպել է Արգենտինայի Հանրապետության Պատգամավորների պալատի Արգենտինա-Հայաստնա բարեկամության խմբի հետ: Հանդիպման ընթացքում ի թիվս այլ հարցերի քննարկվել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Պատգամավոր Բրենդա Օսթինը ներկայացրել է ԼՂ սահմանադրական հանրաքվեին մասնակցելու նպատակով Լեռնային Ղարաբաղ կատարած իր այցի մանրամասները և կարևորել հիմնախնդրի՝ խաղաղ ճանապարհով կարգավորման անհրաժեշտությունը: Նախարար Հ. Հակոբյանը, շնորհակալություն հայտնելով բարեկամության խմբին Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող ասպարեզում իրենց ունեցած ներդրման համար, շեշտել է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը գտնվում է մարդու իրավունքների հարթությունում, ինչպես նաև այն, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրավունք ունի անվտանգ ապրել իր պատմական հողում: Քննարկվել է նաև Պառլամենտում հունիսի 5-ին Հայոց ցեղասպանությանը նվիրված օրենքի ընդունման 10-ամյակը նշելու

արարողությունը: Նախարարը շնորհակալություն է հայտնել այդպիսի ձեռնարկ կազմակերպելու համար և խնդրել առավել ուշադրություն դարձնել ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:

- Երեկոյան Հ. Հակոբյանը մասնակցել է Ռեխիո թատրոնում կազմակերպված Հայաստանի 1-ին Հանրապետության 99-ամյակին նվիրված միջոցառմանը, ելույթ ունեցել ներկաների առջև և վերջում «Արմենիա» թերթի գլխավոր խմբագիր Գևորգ Գազանճյանին պարգևատրել է ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալով:

Մայիսի 31, 2017թ.

- Նախարար Հ. Հակոբյանը այցելել է Հայաստան-Արգենտինա դպրոց, որը ստեղծվել է Արզումանյանների ֆինանսական ներդրումների միջոցով: Այն հայերի յուրօրինակ շնորհակալությունն է Արգենտինայի պետությանը հայ ժողովրդին ընձեռած լավագույն հնարավորությունների համար: Դպրոցը կապերի մեջ է Երևանի արգենտինյան դպրոցի հետ: Նախարարը ելույթ է ունեցել մանկավարժների և աշակերտների առջև:
- Այնուհետև ՀՀ սփյուռքի նախարարը հանդիպել է Արգենտինայի Հանրապետության մարդու իրավունքների և մշակութային բազմազանության պետական քարտուղար Կլաուդիո Ավրուխի հետ: Հանդիպման ընթացքում ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը, բարձր գնահատելով Արգենտինայի իշխանությունների կողմից ստանձնած մարդու իրավունքների բնագավառում առաջամարտիկի դերը, հանգամանալից ներկայացրեց ՀՀ իշխանությունների կողմից սիրիահայերի՝ Հայաստանում ինտեգրվելու նպատակով կրթության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտներում իրականացվող ծրագրեր: Ի պատասխան՝ Կլաուդիո Ավրուխը առանձնահատուկ ընդգծեց Արգենտինայում բոլոր ասպարեզներում հայ համայնքի ունեցած դերակատարումը և արժեքավոր ներդրումը: Հանդիպման ընթացքում նա տեղեկացրեց նաև, որ վերջին շրջանում առաջին անգամ Արգենտինա է ներգաղթել Թուրքիայից 7 ընտանիք, որոնք ըստ այդ ընտանիքների՝ հալածվում են գյուլենական շարժմանը հարելու կամ այդ շարժման հետ առնչություն ունենալու պատճառով: Հանդիպման վերջում Կլաուդիո Ավրուխը Արգենտինայի կառավարության անունից հանձնառություն հայտնեց Հայաստանի հետ երկկողմ հարաբերություններում հավատարիմ

մնալ մարդու իրավունքների և Հայոց ցեղասպանության հարցերում ունեցած իրենց դիրքորոշմանը:

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Բուենոս Այրեսում մասնակցել է Հայ բժիշկների միջազգային 12-րդ համագումարի (AMWC) բացման հանդիսավոր արարողությանը, որը նախագահում է արգենտինահայ ակնառու բժիշկ, վարակաբան Դանիել Ստամբուլյանը: ՀՀ սփյուռքի նախարարն իր ելույթում կարևորել է համագումարի անցկացումը՝ խորին երախտագիտություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին՝ ՖԱՅԴԵՔ հիմնադրամի, Ստամբուլյան հիմադրամի և ՊԼԱՍ-ի աշխատակազմերին, և բոլոր նրանց, ովքեր իրենց անգնահատելի լուման են ներդրել այս գործում, հատկապես՝ ՖԱՅԴԵՔ հիմնադրամի հիմնադիր-նախագահ Դանիել Ստամբուլյանին: Նախարարը նաև հույս է հայտնել, որ համագումարը կհամախմբի աշխարհի հայ բժշկական ներուժն՝ ի նպաստ Հայաստանի առողջապահական համակարգի զարգացման: Ողջունելով Հայաստանից և աշխարհի տարբեր երկրներից Հարավային Ամերիկայում գտնվող հայ բժիշկներին՝ Հրանուշ Հակոբյանը հաջող և արդյունավետ ընթացք է մաղթել համագումարի աշխատանքներին:

  Հայ բժիշկների միջազգային 12-րդ համագումարում ՀՀ սփյուռքի նախաարար Հրանուշ Հակոբյանի ելույթում բարձացված հարցերն են՝

  1. Բժիշկների ակտիվ մասնակցություն ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ առողջապության նախարարության հռչակած «Առողջ Հայաստան» ծրագրին,
  2. Առողջապահության կարևոր ճյուղերի զարգացում՝ Հայաստանը տարածաշրջանում առողջապահության ոլորտի կենտրոն դարձնելու հեռանկարով,
  3. Մասնագիտական ժողովների անցկացում Երևանում,
  4. Հայ-Ամերիկյան առողջության կենտրոնի բազայի վրա կրծքագեզձի քաղցկեղի դեմ պայքարի վերաբերյալ համաժողովների անցկացում,
  5. Հայաստանցիի բժիշկների վերապատրաստում արտերկրում,
  6. Դեղագործության ոլորտի զարգացում, որը ՀՀ կառավարությունը հռչակել է գերակա ոլորտ:

- Նույն օրը երեկոյան նախարարի հետ հանդիպել են Օտարերկրյա համայնքների Արգենտինայի Ֆեդերացիայի անդամները: Ֆեդերացիան նախագահում է հայազգի Խուան Սարաֆյանը: Հանդիպման ընթացքում

40-ից ավելի ազգերի ներկայացուցիչներ լսեցին նախարարի ելույթը, ապա նա պատասխանեց տասնյակ հարցերի, որոնք վերաբերում էին ամենատարբեր շրջանակների:

Հունիսի 1, 2017թ.

Նախարարը մեկնել է Կորդոբա

- Նախարարը հանդիպել է Կորդոբայի քաղաքապետ Ռամոն Խավիեր Մեստրեի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Արգենտինա համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն է հայտնել Ռամոն Խավիեր Մեստրեի ՝ հայ համայնքին ցուցաբերած աջակցության համար և կոչ արել առավել սերտ կապեր հաստատել Հայաստանի Հանրապետության հետ՝ ներկայացնելով նաև նախարարության ռազմավարությունն ու իրականացրած ծրագրերը: Նախարարը քաղաքապետին առաջարկեց մասնակցել Երևանի 2800-ամյակին նվիրված միջոցառումներին և անձնամբ ճանաչել և տեսնել Հայաստանը: Նախարարը նաև հորդորել է գործարարների խմբեր ուղարկել Հայաստան: Իր հերթին քաղաքապետը շեշտել է հայ համայնքի՝ քաղաքային կյանքում ունեցած դերն ու ձեռքբերումները: Հանդիպումն ավարտվել է հուշանվերների փոխանակումներով:
- Այնուհետև նախարար Հ. Հակոբյանը հանդիպել է Կորդոբա նահանգի վարչապետ Խուան Կառլոս Մասսեիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են տարբեր ոլորտներում համատեղ գործակցության հնարավորություններն ու հեռանկարները: Խուան Կառլոս Մասսեին շեշտել է նահանգային կյանքում ունեցած հայ համայնքի կարևորությունը՝ ընդգծելով, որ հայ համայնքը հասարակական, մշակութային և այլ ոլորտներում մշտապես աջակցել է նահանգային կյանքի բարելավմանը և հանդես է եկել կառուցողական նախաձեռնություններով: Նախարար Հրանուշ Հակոբյանն իր խոսքում նշել է, որ երկու երկրների միջև առկա երկխոսության մակարդակը թույլ է տալիս ավելի ընդլայնել և զարգացնել տնտեսական կապերը, ներկայացրել է Հայաստանի ներդրումային դաշտի առանձնահատկությունները, գրավչությունը և նպաստավոր պայմանները և կոչ արել առավել սերտ կապեր հաստատել հայ գործարարների հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել Արգենտինայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էսթեր Մկրտումյանը, Կորդոբայի հայկական համայնքի

նախագահ Էդուարդո Թութուշյանը, Կորդոբայի Հայ Առաքելական Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Հարություն քահանա Սեփանյանը և համայնքային այլ ներկայացուցիչներ:

- Նույն օրը նախարար Հ. Հակոբյանը այցելել է Կորդոբայի «Սահակ-Մեսրոպ» հայկական վարժարան, Սուրբ Գևորգ եկեղեցի, ՀՅԴ «Անդրանիկ» ակումբ և ՀԲԸՄ ակումբ: Ողջունելով հանդիպումների մասնակիցներին՝ նախարարը մաղթել է նրանց չհեռանալ արմատներից, օտար հողում պահպանել իրենց հայկական ինքնությունը, չմոռանալ Մայրենին և հաճախ այցելել Հայաստան: Նախարարը նաև ներկայացրել է նախարարության գործունեությունը, ծրագրերը՝ «Արի տուն», «Սփյուռք» ամառային դպրոց, «Իմ Հայաստան» համահայկական փառատոն, անդրադարձել է Լրագրողների համահայկական համաժողովի ժամանակ սկիզբ դրված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժմանը: Հանդիպումների ընթացքում ՀՀ սփյուռքի նախարարը շնորհակալագրեր է հանձնել համայնքի ներկայացուցիչներին և գեղարվեստական խմբերին՝ իրենց ծավալած հայրենանվեր գործունեության համար:

Նույն օրը երեկոյան նախարարը վերադարձել է Բուենոս Այրես:

Հունիսի 2, 2017թ.

- Նախարարը հանդիպել է ՀԲԸՄ ղեկավարների, որոնց հետ «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման շրջանակներում Արգենտինայում, Հայաստանում և Արցախում կազմակերպվում է համերգների շարք: Գագիկ Գասպարյանի գլխավորությամբ համերգներն արդեն կազմակերպվում են, և հասույթը տրամադրվելու է Արցախի երաժշտական դպրոցների համար երաժշտական գործիքներ գնելու նպատակով (արդեն մեկը գնվել է):
- Նախարարն ընդունել է «Հայ ձայն» թերթի խմբագրին: Քննարկվել են թերթում լույս տեսնող մի շարք թեմաներ, և նախարարը հույս է հայտնել, որ այսուհետ նախարարության ծրագրերը և ձեռքբերումները նույնպես կլուսաբանվեն:

- Այնուհետև նախարարը հանդիպել է Սենատի անդամ Միրիամ Բոյաջյանի և նրա քրոջ՝ նախկին պատգամավոր Աննա Բոյաջյանի հետ և քննարկել ԼՂ հակամարտության հետ կապված հարցեր:

Օրվա 2-րդ կեսին նախարարը մեկնել է Սան Պաուլո

- ՀՀ պատվավոր հյուպատոս նախարարության Ոսկե հուշամեդալով, իսկ Սան Պաուլոյում ճանաչված քաղաքական գործիչ Ալմինու Մոնտեյրու Ալվարես Ալֆոնսոյին հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած բարեկամական վերաբերմունքի և շարունակական աջակցության համար ՝ Ոսկե մեդալով: Միջոցառմանը ներկա է եղել նաև Բրազիլիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Գալոյանը:

Հունիսի 3, 2017թ.

- Առավոտյան նախարարը հանդիպել է քաղաքում գործող հայկական, համահայկական, հոգևոր կառույցների ղեկավարների հետ: 4 ժամ տևած հանդիպման ընթացքում նախարար Հ հակոբյանը ներկայացրել է Հայաստանի քաղաքական, տնտեսական իրավիճակը, ինչպես նաև ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերն ու անելիքները: Նախարարը պատասխանել է համայնքի անդամների բազմաթիվ հարցերի:
- Օրվա երկրորդ կեսին հյուպատոսությունում նախարարն առանձին ընդունել է ՀԲԸՄ, ՀՅԴ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի, ՀՕՄ-ի, «Արմենիա» ակումբի ղեկավարներին:
- Երեկոյան նախարար Հ. Հակոբյանը հանդիպում է ունեցել մի քանի գործարարների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանում ներդրումներ կատարելու հարցը:

Հունիսի 4, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Սան Պաուլոյի Հայ Առաքելական Սուրբ Գևորգ եկեղեցում մասնակցել է կիրակնօրյա պատարագի:

- Այնուհետև նախարարը այցելել է Հայ Կաթոլիկ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որտեղ հանդիպել է եկեղեցու հոգևոր այրերի հետ: Հանդիպմանը քննարկվել են, համայնքային կյանքին և ապագա անելիքների առնչվող հարցեր:
- Նախարար Հ. Հակոբյանը այցելել է «Արմենիա» ակումբ, որտեղ հանդիպել է ակումբի անդամների հոտ: Հանդիպման ընթացքում նախարարը հանգմանորեն ներկայացրել է Հայաստան-Սփյուռք գործակցության արձանագրած հաջողությունները, մարտահրավերները և հետագա անելիքները: Նախարարն առանձին անդրադարձել է «Դու՛ ի՞նչ ես անում Արցախի համար» համահայկական շարժումը՝ կոչ անելով մշտապես զորավիգ լինել Արցախի ժողովրդին և նպաստել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:
- Այնուհետև նախարարը ներկա է գտնվել Ներգաղթի 22-րդ փառատոնին, որին մասնակցել են Ռուսաստանի Դաշնությունը, Հունաստանը, Իսպանիան, Պորտուգալիան և այլ երկրներ: Փառատոնին ներկայացվել է նաև հայկական մշակույթը, խոհանոցն ու ավանդույթները:
- Ապա Հրանուշ Հակոբյանը այցելել է «Հայաստան» հրապարակ, որտեղ ծաղկեպսակ է դրել Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հուշարձանին:
- Նույն օրը նախարարը եղել է նաև Օզասկոյի հայ համայնքում և մասնակցել Բրազիլիայում անցկացվող ամենամյա ավանդական փառատոնին,
- Այնուհետև նախարար Հ. Հակոբյանը այցելել է SAMA հայկական ակումբ, որտեղ հանդիպել է ակումբի անդամների հետ: Հանդիպման ընթացքում Նախարարը շեշտել է բրազիլահայ երիտասարդների՝ Հայաստանի հետ սերտ կապեր հաստատելու կարևոր հանգամանքը՝ հույս հայտնելով, որ նրանք այսուհետ ավելի գործուն մասնակցություն կունենան նախարարության կողմից իրականացվող ծրագրերին: ՀՀ սփյուռքի նախարարը պատասխանել է նաև բրազիլահայերին հուզող մի շարք հարցերի: Ի թիվս բարձրացված այլ հարցերի նախարարը ներկա գտնվողներին հորդորել է նաև առնվազն երեք տարին մեկ անգամ այցելել Հայաստան ու հանգիստը Հայրենիքում կազմակերպել,
- Օրվա վերջում նախարարը այցելել է Հայ Ավետարանական Եղբայրաց եկեղեցի: Հոգևոր այրերի հետ հանդիպման ժամանակ շոշափվել են Հայաստան-Սփյուռք գործակցությանը վերաբերող հարցեր,
- Նախարարը նաև հարցազրույց է տվել Սան Պաուլոյի ռադիոժամին:

Հունիսի 4, 2017թ.

Ուշ երեկոյան նախարարը մեկնել է Դոհա:

- Քանի որ Երևան հասնելու համար նախարար Հ. Հակոբյանը ստիպված էր լինելու 22 ժամ սպասել Դոհայի օդանավակայանում, որոշում է կայացվել հանդիպում կազմակերպել Քաթարի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցել են 100-ից ավելի քաթարահայեր: Նախարար Հ. Հակոբյանը ներկայացրել է նախարարության գործունեությունը, ծրագրերը, ինչպես նաև հանգամանորեն խոսել է ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ անելու անհրաժեշտության և բարենպաստ պայմանների երաշխավորման մասին:

Հունիսի 6, 2017թ.

Երեկոյան նախարարը վերադարձել է Երևան:

8. **Գործուղվողը՝**
   Հրանուշ Հակոբյան

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**
   09. 06. 2017թ.